17
ՀՈՒՆՎԱՐԻ
2022

Luys Lnyu®

“authoritarian democracy?”

ԻՆՉՈ՞Ւ ԱՄԵՐԻԿՅԱՆ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ» ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԵԿԱՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԸ

ԻՆՉՈ՞Ւ ԱՄԵՐԻԿՅԱՆ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ» ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԵԿԱՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԸ.

ԱՄՆ գաղափարախոսական ձախողումը Մերձավոր Արևելքում և Աֆղանստանում (Կենտրոնական Ասիա) և Թուրքիայի արագ անցումը հիբրիդային ժողովրդավարությունից դեպի ավտորիտարիզմի

Դեռևս Խորհրդային Միության փլուզումից առաջ՝ հիմնականում Մերձավոր Արևելքում, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ նաև Կենտրոնական Ասիայում ու հետխորհրդային տարածաշրջանում հավաքական Արևմուտքը, իսկ ավելի որոշակի՝ դրա ոչ ֆորմալ անգլոսաքսոնական առաջնորդները՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, ակտիվ ջանքեր էին գործադրում տարածաշրջանի երկրներում լոյալ ռեժիմներ ձևավորելու և դրանք սեփական աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական շահերին ծառայեցնելու նպատակով: Այս գործընթացը չէր կարող տեղի ունենալ առանց որոշակի գաղափարական ուղեկցության, և ի սկզբանե տարածաշրջանի երկրներին ու ժողովուրդներին «ցանկալի» աշխարհաքաղաքական ընտրության համար որպես «փոխհատուցում» առաջարկվում էր արևմտյան ժողովրդավարության մոդելը և զարգացման ճանապարհը:

Իհարկե, այս գործընթացը ուղեկցվում էր անգլոամերիկյան ֆինանսական կապիտալի ակտիվ ներգրավմամբ՝ թիրախային երկրներում խոշոր ներդրումների տեսքով (հիմնականում նավթագազային ոլորտում, ինչպես նաև ՀԿ հատվածում), իսկ հաճախ զուգորդվում էր կոնկրետ ռազմական ներգործությամբ: Սակայն երկարաժամկետ հաջողության գրավականը հենց գաղափարական-քարոզչական բաղադրիչի արդյունավետությունից էր կախված, և թվում էր, թե գրավիչ «արևմտյան ժողովրդավարությունը» հենց այդպիսի էֆեկտ էր ունենալու: Այս մոտեցումը նոր չէր, այն կիրառվել էր նաև «Սառը պատերազմի» տարիներին և հիմնականում հաջողությամբ էր պսակվել Լատինական Ամերիկայի, Արևելյան Ասիայի, Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների հիմնականում ոչ մահմեդական միջավայրում:

Հետխորհրդային ոչ մահմեդական երկրներում նույնպես այս ռազմավարությունը որոշակի հաջողություններ գրանցեց՝ Մերձբալթյան երկրների

լիարժեք ինտեգրումը արևմտյան կառույցներին, լոյալ ռեժիմների հաստատումը Ուկրաինայում, Վրաստանում, Մոլդովայում, մասնակի հաջողությունները Հայաստանում: Սակայն գաղափարական տեսանկյունից այն սնանկ էր Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մահմեդական երկրների համար (եթե հաշվի չառնենք ժամանակավոր հաջողությունները Իրաքում, Եգիպտոսում, Աֆղանստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում և այլն): Պատահական չէ, որ այս երկրներում իր շահերն առաջ մղելու նպատակով Արևմուտքը հաճախ չէր սահմանափակվում գունավոր հեղափոխությունների ուղղակի կամ անուղղակի աջակցությամբ, այլ ստիպված էր լինում դիմել ինտերվենցիայի և ակտիվ ռազմական գործողությունների:

Թեև սա հանգեցնում էր որոշակի մարտավարական հաջողությունների, սակայն երկարաժամկետ և ռազմավարական կտրվածքով այսպիսի քաղաքականության արդյունավետությունը խիստ կասկածելի էր: Տարածաշրջանի երկրներում «հավատարիմ» քաղաքական համակարգեր ձևավորելու և իր դիրքերը երկարաժամկետ ամրապնդելու նպատակով ԱՄՆ-ը տրիլիոնավոր դոլարներ ծախսեց Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում և տարածաշրջանի այլ երկրներում, սակայն արդյունքը եղավ լիարժեք գաղափարական ֆիասկոն: Դեռ պետք է հասկանալ, թե ինչ իրական հետևանք ունեցավ Արաբական գարունը տարածաշրջանում ամերիկյան ազդեցության ամրապնդման տեսանկյունից. չէ՞ որ թվացյալ հաջողություններից կարճ ժամանակ անց տարածաշրջանի երկրներից շատերը որդեգրեցին ԱՄՆ-ի շահերին չհամապատասխանող, շատ հարցերում նույնիսկ հակասող քաղաքական ուղեգիծ (Եգիպտոս, Սիրիա, Իրաք և այլն): ԱՄՆ զորքերի կամ դրանց մեծ մասի դուրսբերումը Սիրիայից, Իրաքից, Աֆղանստանից, ոչ միայն չուղեկցվեց այդ երկրներում լոյալ քաղաքական համակարգերի ձևավորմամբ, այլև այնտեղ ավելի խոր արմատներ ձգեցին հակաամերիկյան տրամադրությունները, իսկ որոշ դեպքերում շեշտակիորեն ամրապնդվեցին ԱՄՆ աշխարհաքաղաքական հակառակորդների դիրքերը: Այսպես, Իրաքում զգալիորեն ամրապնդվեցին Իրանի դիրքերը, Սիրիայում՝ ՌԴ և Իրանի, Աֆղանստանի հարևան Պակիստանում՝ Չինաստանի, Կենտրոնական Ասիայում՝ Ռուսաստանի և Չինաստանի:

Խնդիրն այն է, որ մահմեդական միջավայրին հիմնականում խորթ են լիբերալ-ժողովրդավարական արժեքները, ու թեև բարեկեցիկ ապագայի և արևմտյան տնտեսական մոդելի առավելությունները որոշակի ժամանակավոր ազդեցություն ունենում էին այդ երկրների ժողովուրդների մի մասին մոբիլիզացնելու տեսանկյունից, սակայն այդ գաղափարները տարածաշրջանի հասարակության շրջանում խոր

արմատներ չէին գցում, քանի որ բախվում էին ավելի արմատավորված և ռադիկալ պահպանողական, իսլամական գաղափարախոսության հետ: Իհարկե, գաղափարական և արժեհամակարգային տարբերությունները Արևմուտքին երբեք չեն խանգարել սերտորեն համագործակցելու տարածաշրջանի այս կամ այն ավտորիտար ռեժիմի հետ, սակայն դա հնարավոր է եղել բացառապես այն դեպքերում, երբ տվյալ երկրի կամ այնտեղ իշխող ռեժիմի ծրագրերը համընկնել են արևմուտքի իրվիճակային շահերի հետ: Միաժամանակ, այդ համագործակցությունը հիմնականում զուրկ է գաղափարական բաղադրիչից. Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի կամ Հորդանանի ժողովուրդները ակնհայտորեն ԱՄՆ-ին կամ Արևմուտքին չեն ընկալում որպես գաղափարական դաշնակիցներ, երբեք չեն ձգտել շարժվել զարգացման լիբերալ-ժողովրդավարական ուղղությամբ:

Արդյունքում, Մերձավոր Արևելքում ԱՄՆ թվացյալ գերակայությունը բախվում է մի իրականության հետ, երբ այն կախված է տարածաշրջանում որոշակի քաղաքական կոնյունկտուրայից, և քանի դեռ տարածաշրջանի երկրների շրջանում բացակայում է համարժեք քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական այլընտրանքը, այն պահպանում է իր կենսունակությունը: Պատահական չէ, որ ԱՄՆ գերակայության առաջին ճեղքերը առաջացան հենց գաղափարական դաշտում. իսլամական հեղափոխությունը Իրանում, ծայրահեղական իսլամական գաղափարախոսության (Ալ Քաիդա, Իսլամական պետություն) տարածումը Իրաքում, Սիրիայում կասկածի տակ դրեցին Մեծ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական գերակայության անսասանությունը: Սա ավելի նկատելի դարձավ, երբ գաղափարականից զատ, տարածաշրջանը ստացավ նաև ֆինանսատնտեսական (ի դեմս Չինաստանի), և ռազմական (ի դեմս Ռուսաստանի) այլընտրանքի հնարավորություն:

Թերևս գաղափարական դաշտում ձախողումն էր առաջնահերթ պատճառը, որ ԱՄՆ-ը վերջին տարիներին շեշտակիորեն փոխեց տարածաշրջանային քաղաքականության իր ռազմավարությունը: Պետք էր տարածաշրջանի երկրների համար գտնել զարգացման, գաղափարախոսական ավելի հոգեհարազատ, կենսունակ և ընկալելի մոդել: Հակառակ դեպքում, չնայած հսկայական ռազմատնտեսական ազդեցությանը, անխուսափելի էր դառնում Արևմուտքի ռազմավարական պարտությունը տարածաշրջանի երկրների համար ավելի ընկալելի օրակարգ ու զարգացման ճանապարհ առաջարկող գերտերություններին՝ Չինաստանին և Ռուսաստանին: Սակայն Արևմուտքը՝ սեփական «դեմքով» և կերպարով, այլևս չէր կարող նման դերակատարություն ստանձնել: Միաժամանակ,

Չինաստան-ԱՄՆ մրցակցության խորացումը վերջինիս ստիպում էր իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վրա:

Չնայած Մերձավոր Արևելքում Միացյալ Նահանգների հսկայական ռազմական ներկայությանը, տարբեր երկրներում ամերիկյան ռազմաբազաների առկայությանը, այնուամենայնիվ, տարածաշրջանում ԱՄՆ իրական դաշնակիցները Իսրայելն ու ՆԱՏՕ-ի անդամ միակ մերձավորարևելյան մահմեդական երկիր Թուրքիան են: Իսրայելը, տարբեր հանգամանքներից ելնելով, որևէ պարագայում չի հավակնում դառնալ օրինակելի մոդել Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մահմեդական երկրների համար: Թուրքիան, որն ի սկզբանե ներկայացվում էր որպես տարածաշրջանի եզակի և օրինակելի «ժողովրդավարական» երկիր, այդպես էլ չկարողացավ այդ մոդելը հաջողությամբ տարածել տարածաշրջանի այլ երկրներում: Փոխարենը շեշտակիորեն աճեց ավտորիտար երկրների ազդեցությունը՝ Իրան, Սաուդյան Արաբիա, Կատար և այլն:

Հետաքրքիր «զուգադիպությամբ» Մերձավոր Արևելքում ԱՄՆ քաղաքականության վերափոխման գործընթացը զուգորդվեց Թուրքիայում քաղաքական համակարգի ձևափոխման հետ: Եթե «թուրքական ժողովրդավարությունը» և աշխարհիկ բարքերը ընկալելի ու օրինակելի չէին Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի ժողովուրդների՝ առաջին հերթին քաղաքական էլիտաների համար, ապա «թուրքական ավտորիտարիզմը»՝ պարուրված կրոնական (սուննի) և էթնիկ (թյուրքական) գաղափարախոսական թելերով, շատ ավելի հասկանալի, օրինակելի էին այս երկրներից շատերի համար:

Սակայն Թուրքիան ակնհայտորեն չունի այն քաղաքական-տնտեսական ներուժը, որը վերջինիս հնարավորություն կտա միայնակ ստանձնել այս հսկայական տարածաշրջանում աշխարհաքաղաքական «առաջնորդության» գործը: Փոխարենը Թուրքիան կարող է ապահովել անհրաժեշտ ռազմական և գաղափարախոսական բաղադրիչը: Արդյունքում նշմարվում է մի հետաքրքիր կոմբինացիա, երբ տարածաշրջանի մի շարք թեժ կետերից հեռանում է արևմտյան ռազմական-քաղաքական գործոնը, որին փոխարինում է Թուրքիան, միաժամանակ ամերիկյան և բրիտանական կապիտալը շարունակում է պահպանել ու ընդլայնել տարածաշրջանում իր ֆինանսատնտեսական լծակները: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել Թուրքիայի ջանքերը Իրաքում, Լիբիայում և Սիրիայում, Քաբուլի օդանավակայանի համատեղ կառավարումը Թուրքիայի և Կատարի կողմից, Թուրքական պետությունների կազմակերպության ակտիվացումը և այլն:

Փաստացիորեն, հաշվի առնելով տարածաշրջանային քաղաքականության վերջին տասնամյակների զարգացումներն ու փորձը՝ Արևմուտքը ի դեմս թուրքական նոր ավտորիտար մոդելի՝ Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրներին առաջարկում է ընտրություն կատարել «էթնիկ-կրոնական ավտորիտարիզմի» և Չինաստանի ու ՌԴ կողմից խրախուսվող «աշխարհիկ ավտորիտարիզմի» միջև: Ընդ որում, Արևմուտքը Թուրքիայի նկատմամբ պահպանում է ազդեցության հսկայական՝ առաջին հերթին ֆինանսատնտեսական լծակներ, և միամտություն կլինի կարծել, թե այս քաղաքականության արդյունքում Թուրքիան կարող է դառնալ լիարժեք ինքնուրույն բևեռ: ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան կփորձեն պահպանել տարածաշրջանում իրենց տնտեսական և քաղաքական ներկայությունն ու դերակատարությունը՝ ռազմական ու գաղափարական բաղադրիչը աստիճանաբար զիջելով Անկարային, միաժամանակ պահպանելով Թուրքիայի նկատմամբ անհրաժեշտ լծակները և զսպելով ինքնուրույն գործոն դառնալու վերջինիս նկրտումները:

Դերենիկ Խաչատրյան

Արտաքին քաղաքականության
և անվտանգության հարցերով փորձագետ,
«Լույս» հիմնադրամ

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*